Ոչ պաշտոնական թարգմանություն

Ախուրյան համայնքի ղեկավար

Պարոն Արծրունի Իգիթյանին

Թեմա՝ Դրական մնացորդի տեղափոխման խնդրանք

ՀԿՀ 05545973
«ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմ»
ՀԿՀ
ՍՏԻՑ N5903/22 «06» 12 2022 թ.

Հարգելի պարոն Արծրունի Իգիթյան,

Նամակը վերաբերում է «Առափի գյուղում ջրահեռացման համակարգի կառուցման ծրագրի» 94,873 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագրին՝ ստորագրված Հայաստանում Ճապոնիայի դեսպանության և Առափի գյուղի վարչակազմի միջև 2017 թվականի մարտի 14-ին, և Ճապոնիայի դեսպանության 2022թ. -ի մարտի 10-ի նամակին:

Դեսպանությունը սույնով խնդրում է Ախուրյանի համայնքին՝ Առափի համայնքի իրավահաջորդ վարչական մարմնին, բացել համայնքի առանձին բանկային հաշիվ և փոխանցել մնացած 4051 ԱՄՆ դոլար գումարը Առափի համայնքի նախկին համայնքապետ պարոն Ալբերտ Այվազյանին պատկանող ծրագրի բանկային հաշվից (ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ Գյումրու մասնաճյուղ՝ 220373170178001 հաշվեհամար)՝ հաշվի առնելով հետևյալ կետերը.

- Համաձայն Մարդկային անվտանգության "Grassroots" ծրագրերի (GGP) դրամաշնորհային աջակցության ընդհանուր ուղեցույցի՝ ծրագրի (դրամաշնորհի) շահառուից/ստացողից պահանջվում է բացել առանձին բանկային հաշիվ՝ դեսպանությունից դրամաշնորհը ստանալու համար: Այս առումով, դեսպանատան հետ խորհրդակցելուց հետո, համայնքը ծրագրի համար բացեց բանկային հաշիվ պարոն Այվազյանի անունով, քանի որ համայնքին արգելված էր ունենալ բազմաթիվ բանկային հաշիվներ, բացի համայնքապետարանի համար օգտագործվողից:
- 94,873 ԱՄՆ դոլարի դրամաշնորհը դեսպանության կողմից հատկացվել է 2017 թվականի մարտի 28-ին: Իրականացման գործընթացից հետո ծրագիրն ավարտին հասավ 2017 թվականի հոկտեմբերի 22-ին, և համայնքը մինչ օրս պահպանել է մնացած 4051 ԱՄՆ դոլարը ծրագրի բանկային հաշվին:
- Դեսպանության և համայնքի միջև համաձայնագրի հիման վրա մնացած հաշվեկշռի (մնացորդի) ողջ գումարը վերադարձվելու է դեսպանությանը:

Այնուամենայնիվ, դեսպանությանը լրացուցիչ ժամանակ է պահանջվում դրական հաշվեկշռի ճշգրտությունը ուսումնասիրելու համար՝ դրա առաջացման պատճառների բարդության հետևանքով: Դեսպանատանը վերադարձվելիք գումարը կարող է փոխվել ուսումնասիրությունից հետո:

- Միևնույն ժամանակ, գլխամասից դեսպանատանը հանձնարարվել է դրամաշնորհը չպահել ֆիզիկական անձի պատկանող ծրագրի բանկային հաշվին, ներառյալ այս ծրագրի դեպքում: Դրամաշնորհի մնացորդը պետք է փոխանցվի համայնքապետարանի հաշվին, ցանկալի է առանձին բանկային հաշվին՝ նախատեսված միայն ծրագրի համար: Բացի այդ, նոր հաշիվը պետք է համապատասխանի պահանջներին, մասնավորապես՝ պետք է լինի հաշիվ, որը տոկոսադրույք չի հաշվարկում, որից հեշտ է կանխիկացնել գումարը և որից հեշտությամբ կտրամադրվեն բանկային քաղվածքներ դեսպանատան խնդրանքով:
- Դրամաշնորհը փոխանցելուց հետո խնդրում ենք տրամադրել նոր հաշվի քաղվածք, ինչպես նաև ընթացիկ հաշվի քաղվածք՝ թողարկված մինչև այդ հաշվի փակումը:
- Խնդրում ենք նկատի ունենալ, որ ցանկացած բանկային վճար, որը կարող է առաջանալ գործարքից, ներառյալ միջնորդավճարը, պետք է վճարվի համայնքապետարանի կողմից:

Եվ վերջինը, բայց ոչ կարևորությամբ, մենք անկեղծորեն գնահատում ենք ձեզ հետ մինչ այժմ համագործակցությունը և շարունակում ենք ապավինել ձեր աջակցությանը՝ առկախ խնդիրները հաջողությամբ լուծելու համար:

5 դեկտեմբերի, 2022

Հարգանքով,

ՖՈՒԿՈՒՇԻՄԱ Մասանորի

Հայաստանում Ճապոնիայի դեսպան